

ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՁՆ Է

Օրենքով արգելվում է, որ դաշնային ֆինանսական աջակցություն ստացող այս անձը հետևյալ հիմքերով խտրական վերաբերմունք ցուցաբերի՝ Միացյալ Նահանգների ցանկացած անհատի նկատմամբ՝ ըստ ռասայական պատկանելության, մաշկի գույնի, կրոնի, սեռի (ներառյալ հղիությունը, ծննդաբերությունը և համապատասխան առողջական վիճակը, սեռի կարծրատիպը, անդրսեռային կարգավիճակը և սեռադերային ինքնանույնականացումը), ազգային ծագման (ներառյալ՝ անգլերեն լեզվի սահմանափակ տիրապետումը), տարիքի, հաշմանդամության կամ քաղաքական պատկանելության կամ հայացքների, կամ Workforce Innovation and Opportunity Act-ի (WIOA) («Զբաղվածության ոլորտում նորարարությունների և նոր հնարավորությունների մասին» օրենք) | բաժնի դրույթներով նախատեսված ֆինանսական աջակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկացած շահառուի, դիմորդի կամ մասնակցի նկատմամբ՝ ըստ անհատի քաղաքացիության կամ WIOA | բաժնի դրույթներով նախատեսված ֆինանսական աջակցությամբ իրականացվող որևէ ծրագրում կամ միջոցառման մեջ ունեցած մասնակցության:

Դաշնային ֆինանսական աջակցություն ստացող անձինք պետք է ողջամիտ քայլեր ձեռնարկեն, որպեսզի հաշմանդամ անհատների հետ հաղորդակցությունը լինի նույնքան արդյունավետ, որքան այլոց հետ: Դա նշանակում է, որ, պահանջի դեպքում և անհատի համար անվճար, ստացողները պարտավոր են պատշաճ օժանդակ օգնություն և ծառայություններ տրամադրել համապատասխան պահանջներին բավարարող հաշմանդամ անհատներին:

ԻՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ ԿԱՐԾՈՒՄ ԵՔ, ՈՐ ԵՆԹԱՐԿՎԵԼ ԵՔ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Եթե կարծում եք, որ խտրականության եք ենթարկվել WIOA | բաժնի դրույթներով նախատեսված ֆինանսական աջակցությամբ իրականացվող ծրագրի կամ միջոցառման շրջանակներում, կարող եք դեպքից հետո 180 օրվա ընթացքում բողոք ներկայացնել ստացողի Հավասար հնարավորությունների հարցերով տեսուչին կամ ստացողի կողմից նշանակված անձին: Կարելի է բողոքները փոստով ուղարկել Զբաղվածության զարգացման վարչությանը (Employment Development Department) կամ Աշխատանքի նախարարության (Department of Labor) Քաղաքացիական իրավունքների կենտրոնին (Civil Rights Center) հետևյալ հասցեով՝

**Equal Opportunity Officer
Employment Development Department (EDD)
PO Box 826880, MIC 83
Sacramento, CA 94280**

կամ

**Director, Civil Rights Center (CRC), Department of Labor
200 Constitution Avenue NW, Room N-4123
Washington, DC 20210**

Բողոքները կարելի է ներկայացնել նաև EDD-ին՝ էլեկտրոնային փոստի EEOmail@edd.ca.gov հասցեով, կամ ըստ Աշխատանքի նախարարության CRC կենտրոնի www.dol.gov/crc կայքում տրված ցուցումների:

Եթե Ձեր բողոքը ներկայացնում եք ստացողին, ապա պետք է սպասեք, մինչև ստացողը տա *Notice of Final Action* (Վերջնական որոշման մասին գրավոր ծանուցագիր), կամ մինչև անցնի 90 օր՝ նայած, թե որն ավելի շուտ տեղի կունենա, նախքան բողոքը CRC-ին ներկայացնելը (տե՛ս վերը նշված հասցեն):

Եթե ստացողը Ձեր բողոքի ներկայացման օրից հաշված 90 օրվա ընթացքում *Notice of Final Action* (Վերջնական որոշման մասին գրավոր ծանուցագիր) չի տալիս Ձեզ, ապա պետք չէ բողոքը CRC-ին ներկայացնելուց առաջ սպասել, մինչև ստացողը կտա այդ ծանուցագիրը: Մակայն Դուք պետք է բողոքը CRC-ին ներկայացնեք 90-օրյա ժամկետից հետո 30 օրվա ընթացքում (այլ կերպ ասած՝ Ձեր բողոքը ստացողին ներկայացնելու օրվանից հաշված 120 օրվա ընթացքում):

Իսկ եթե ստացողը տալիս է Ձեր բողոքի վերաբերյալ *Notice of Final Action* (Վերջնական որոշման մասին գրավոր ծանուցագիր), բայց որոշումը կամ հարցի կարգավորումը չի գոհացնում Ձեզ, ապա իրավունք ունեք բողոք ներկայացնելու CRC-ին: Դուք պետք է բողոքը CRC-ին ներկայացնեք *Notice of Final Action* (Վերջնական որոշման մասին գրավոր ծանուցագիր) ստանալու ամսաթվից հետո 30 օրվա ընթացքում:

EDD-ն հավասար հնարավորություններ ընձեռող գործատու-ծրագիր է: Ըստ պահանջի՝ օժանդակ օգնություն և ծառայություններ են հասանելի հաշմանդամ անհատներին: Ծառայությունների, օգնության և (կամ) այլընտրանքային ձևաչափերի վերաբերյալ հարցումները պետք է կատարվեն՝ զանգահարելով 866-490-8879 (ձայնային) համարով: TTY օգտագործողներին խնդրում ենք զանգահարել Կալիֆոռնիայի Կոմունիտատորային ծառայության (California Relay Service) 711 համարով: